ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

Դատական դեպարտամենտի կարիքների համար ներքին աուդիտի ծառայության ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԳՀԾՁԲ-26/04» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «24» հունիսի 2026թ.
Ժամը՝ 11:00

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նախագահ՝

Արշակ Վարդապետյան՝ Դատական դեպարտամենտի ղեկավարի առաջին տեղակալ (գնման պատասխանատու/ գնահատման հանձնաժողովի ղեկավար՝ **ԳՊ/ԳԱՊ**)

հանձնաժողովի անդամներ՝

Արթուր Ասատրյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար (գնման պատասխանատու/ բացման աշխատակազմ՝ **ԳՊ/ԲԱ**)

Դավիթ Մելիքբեկյան՝ Դատական դեպարտամենտի հաշվապահական հաշվառման վարչության պետ, գլխավոր հաշվապահ (գնման պատասխանատու/ բացման աշխատակազմ՝ **ԳՊ/ԲԱ**)

հանձնաժողովի քարտուղար՝

Գայանե Դադիվանյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Գնումների համակարգման բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար (գնման պատասխանատու/ ընթացակարգի համակարգող՝ **ԳՊ/ՄԻմ**)

Նիստից բացակայում էին՝

Արուս Հայրապետյան՝ Դատական դեպարտամենտի ղեկավարի տեղակալ (գնման պատասխանատու/ գնահատման աշխատակազմ՝ **ԳՊ/ԳԱ**)

Աննա Չերքեզյան՝ Դատական դեպարտամենտի ֆինանսաբյուջետային վարչության գլխավոր մասնագետ (գնման պատասխանատու/ գնահատման աշխատակազմ՝ **ԳՊ/ԳԱ**)

1. Տեղեկություն՝ «ԴԴ-ԳՀԾՁԲ-26/04» ծածկագրով ընթացակարգի շրջանակում ներկայացված հայտի բացման վայրի, օրվա և ժամի մասին.

Հայտը բացվել է www.armeps.am կայքի՝ էլեկտրոնային գնումների իրականացումն ապահովող համակարգի (այսուհետ՝ Համակարգ) միջոցով՝ 2026թ.-ի հունիսի 24-ին, ժամը 11:00-ին:

2. Տեղեկատվություն՝ գնման հայտով սահմանված՝ գնվելիք ծառայության գնման գնի վերաբերյալ.

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 40-րդ կետի 1-ին ենթակետով՝ հանձնաժողովի նախագահը հրապարակեց գնման հայտով սահմանված՝ սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք ծառայության գնման գինը.

Չափաբաժնի համարը	Չափաբաժնի անվանումը	Գնման հայտով սահմանված գնման գինը (ՀՀ դրամ)
1	Բարձրագույն դատական խորհրդի աշխատակազմ՝ Դատական դեպարտամենտի ներքին աուդիտի ծառայություն	3 288 000

3. Էլեկտրոնային ձևով՝ Համակարգի միջոցով հայտ է ներկայացրել հետևյալ մասնակիցը՝

Մասնակցի անվանումը (անունը)	Մասնակցի գործունեության հասցեն
«Քրոու Արմենիա» ՍՊԸ	ՀՀ, ք. Երևան, «Դոմ Մոսկվի» բիզնես կենտրոն, Արգիշտի փ. 7, 2-րդ հարկ

4. Տեղեկատվություն՝ Կարգի 32-րդ կետի 25-րդ ենթակետով նախատեսված հիմնավորումների վերաբերյալ.

Հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրի՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից գնահատող հանձնաժողովի քարտուղարին հիմնավորումներ չեն ներկայացվել:

5. Տեղեկատվություն՝ հայտի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.

Հայտի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել:

6. Մասնակցի կողմից ներկայացված հայտի ուսումնասիրության նպատակով հանձնաժողովը որոշեց նիստը հետաձգել և հաջորդ նիստը հրավիրել 2026թ. հուլիսի 08-ին՝ ժամը 11:00-ին, Դատական դեպարտամենտի կենտրոնական մարմնի վարչական շենքում (հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1):

Ընդունվել է որոշում. կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Արշակ Վարդապետյան

Անդամներ՝ _____ Արթուր Ասատրյան

_____ Դավիթ Մելիքբեկյան

Քարտուղար՝ _____ Գայանե Դադիվանյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

Դատական դեպարտամենտի կարիքների համար ներքին աուդիտի ծառայության ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԳՀԾՁԲ-26/04» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «08» հուլիսի 2026թ.
Ժամը՝ 11:00

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նախագահ՝

Արշակ Վարդապետյան՝ Դատական դեպարտամենտի ղեկավարի առաջին տեղակալ (գնման պատասխանատու/ գնահատման հանձնաժողովի ղեկավար՝ **ԳՊ/ԳԱՊ**)

հանձնաժողովի անդամներ՝

Արուս Հայրապետյան՝ Դատական դեպարտամենտի ղեկավարի տեղակալ (գնման պատասխանատու/ գնահատման աշխատակազմ՝ **ԳՊ/ԳԱ**)

Աննա Չերքեզյան՝ Դատական դեպարտամենտի ֆինանսաբյուջետային վարչության գլխավոր մասնագետ (գնման պատասխանատու/ գնահատման աշխատակազմ՝ **ԳՊ/ԳԱ**)

Արթուր Ասատրյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար (գնման պատասխանատու/ բացման աշխատակազմ՝ **ԳՊ/ԲԱ**)

Դավիթ Մելիքբեկյան՝ Դատական դեպարտամենտի հաշվապահական հաշվառման վարչության պետ, գլխավոր հաշվապահ (գնման պատասխանատու/ բացման աշխատակազմ՝ **ԳՊ/ԲԱ**)

հանձնաժողովի քարտուղար՝

Գայանե Դադիվանյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Գնումների համակարգման բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար (գնման պատասխանատու/ ընթացակարգի համակարգող՝ **ԳՊ/Մհմ**)

1. Տվյալներ՝ բացված հայտում «ԴԴ-ԳՀԾՁԲ-26/04» ծածկագրով ընթացակարգի հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.

«Քրոու Արմենիա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

2. Մասնակցի առաջարկած գինն է.

ՀՀ դրամ

Չ/Հ	Չափաբաժնի անվանումը	«Քրոու Արմենիա» ՍՊԸ		
		Արժեք	ԱԱՀ	Ընդհանուր գինը
1	**Բարձրագույն դատական խորհրդի աշխատակազմ՝ Դատական դեպարտամենտի ներքին աուդիտի ծառայություն**	20 800 000	4 160 000	**24 960 000**

3. Տվյալներ՝ մասնակցի ներկայացրած հայտում առկա փաստաթղթերի՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու, հայտի գնահատման արդյունքի և «ԴԴ-ԳՀԾՁԲ-26/04» ծածկագրով գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու վերաբերյալ.

3.1. «Քրոու Արմենիա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա գնանշման հարցմանը մասնակցելու դիմում հայտարարությունը (Հավելված 1) կազմված է հրավերով սահմանված պայմաններին համապատասխան:

3.2. «Քրոու Արմենիա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկը (Հավելված 2), ինչպես նաև Բարձրագույն դատական խորհրդի աշխատակազմ՝ Դատական դեպարտամենտի ներքին աուդիտի ծառայության մատուցման առանձին տարրերի գնացուցակում (Հավելված 2.1) նշված ծառայության մատուցման առանձին տարրերի «ԸՆԴԱՄԵՆԸ» գինը գերազանցում են «ԴԴ-ԳՀԾՁԲ-26/04» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակում գնվելիք ծառայության համար գնման հայտով սահմանված գնման գինը:

Վերոգրյալով պայմանավորված, ինչպես նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ հանձնաժողովը որոշեց չկիրառել հրավերի ՄԱՍ Ի-ի 8.7-րդ կետով նախատեսված պայմանը, հանձնաժողովը որոշեց.

- «Քրոու Արմենիա» ՍՊԸ-ի հայտը մերժել,
- ղեկավարվելով «ԴԴ-ԳՀԾՁԲ-26/04» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի ՄԱՍ Ի-ի 8.7-րդ կետի պահանջներով՝ «ԴԴ-ԳՀԾՁԲ-26/04» ծածկագրով գնման ընթացակարգը հայտարարել չկայացած՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիման վրա,
- հաստատել «ԴԴ-ԳՀԾՁԲ-26/04» ծածկագրով գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին հայտարարության տեքստը (կցվում է):

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Արշակ Վարդապետյան

Անդամներ՝ _____ Արուս Հայրապետյան

_____ Աննա Չերքեզյան

_____ Արթուր Ասատրյան

_____ Դավիթ Մելիքբեկյան

Քարտուղար՝ _____ Գայանե Դադիվանյան

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին

Ընթացակարգի ծածկագիրը՝ «ԴԴ-ԳՀԾՁԲ-26/04»

Դատական դեպարտամենտը ստորև ներկայացնում է իր կարիքների համար ներքին աուդիտի ծառայության ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԳՀԾՁԲ-26/04» ծածկագրով գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին տեղեկատվությունը՝

Չափաբաժնի համար	**Գնման առարկայի համառոտ նկարագրություն**	**Գնման ընթացակարգի մասնակիցների անվանումները՝ այդպիսիք լինելու դեպքում**	**Գնման ընթացակարգը չկայացած է հայտարարվել համաձայն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի** /ընդգծել համապատասխան տողը/	**Գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու հիմնավորման վերաբերյալ համառոտ տեղեկատվություն**
1	Բարձրագույն դատական խորհրդի աշխատակազմ՝ Դատական դեպարտամենտի ներքին աուդիտի ծառայություն	«Քրոու Արմենիա» ՍՊԸ	<u>1-ին կետի</u> 2-րդ կետի 3-րդ կետի 4-րդ կետի	«Քրոու Արմենիա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկը (Հավելված 2), ինչպես նաև Բարձրագույն դատական խորհրդի աշխատակազմ՝ Դատական դեպարտամենտի ներքին աուդիտի ծառայության մատուցման առանձին տարրերի գնացուցակում (Հավելված 2.1) նշված ծառայության մատուցման առանձին տարրերի «ԸՆԴԱՄԵՆԸ» գինը գերազանցում են «ԴԴ-ԳՀԾՁԲ-26/04» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակում գնվելիք ծառայության համար գնման հայտով սահմանված գնման գինը: Վերոգրյալով պայմանավորված, ինչպես նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ հանձնաժողովը որոշեց

				չկիրառել հրավերի ՄԱՍ Ի-ի 8.7-րդ կետով նախատեսված պայմանը. - «Քրոու Արմենիա» ՍՊԸ-ի հայտը մերժվել է, - ղեկավարվելով «ԴԴ-ԳՀԾՁԲ-26/04» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի ՄԱՍ Ի-ի 8.7-րդ կետի պահանջներով՝ «ԴԴ-ԳՀԾՁԲ-26/04» ծածկագրով գնման ընթացակարգը հայտարարվել է չկայացած՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիման վրա:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ անգործության ժամկետ է սահմանվում սույն հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել «ԴԴ-ԳՀԾՁԲ-26/04» ծածկագրով գնումների համակարգող Գայանե Դադիվանյանին:

Հեռախոս՝ **010511783**:

Էլեկտրանային փոստ՝ **ddgnumner@court.am**:

Պատվիրատու՝ **Դատական դեպարտամենտ**